ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Հունվարի 2026 **թվականի** N 3240-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի № 1941-Ա, 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի № 621-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 570-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 10-ի «Քաղաքացի Սվետլանա Կորյունի Սահակյանին պատկանող Գյումրի քաղաքի Պռոշյան փողոց № 12 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 169.43 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 587. քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» № 570-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ ըստ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին № Կ-14052026-08-0170 ՀՀ կադաստրի կոմիտեի որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 10-ի «Քաղաքացի Սվետլանա Կորյունի Սահակյանին պատկանող Գյումրի քաղաքի Պռոշյան փողոց № 12 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 169.43 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 587. քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» N 570-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացում և փոփոխությունները.

1) Նախաբանում «912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի» թվերից և բառերից հետո լրացնել «հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023KE9TYA, 2026FRRHAS ծածկագրերը՝» թվերով և բառերով:

2) Վերնագրում, նախաբանում, որոշման 3-րդ կետում «169.43(մեկ հարյուր վաթսունինն ամբողջ քառասուներեք հարյուրերորդական)» թվերը և բառերը փոխարինել «409.96(չորս հարյուր ինն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական)» թվերով և բառերով:

3) Որոշման 1-ին կետում «և նրա վրա առկա» բառերից հետո լրացնել «34.19(երեսունչորս ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի» թվերը և բառերը:

4) Վերնագրում, նախաբանում «578. (հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ)» թվերը և բառերը փոխարինել «578.03 (հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ երեք հարյուրերորդական)» թվերով և բառերով:

5) Որոշման 2-րդ կետում «278.1 (երկու հարյուր յոթանասունութ ամբողջ մեկ տասնորդական)» թվերը և բառերը փոխարինել «278.03 (հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ երեք հարյուրերորդական)» թվերով և բառերով, «2923943(երկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ինը հարյուր քառասուներեք) թվերը և բառերը փոխարինել «2923207 (երկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար երկու հարյուր յոթ)» թվերով և բառերով :

2. Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 10-ի № 570-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» 2025 թվականի օգոստոսի 28-ի № 1941-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 28-ի № 1941-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2025 թվականի մարտի 10-ի № 570-Ա որոշման մեջ լրացում եվ փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի փետրվարի 27-ի № 621-Ա որոշումները ճանաչել ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սվետլանա Կորյունի Սահակյանի լիազորված անձ Սեյրան Վարուժանի Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի